

ՀԱՅԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՊԱԾ ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՄՆԻ ՌԵԱՆ

Եյսօր ճիշդ մէկ ամիս է, որ համախմբված կազմակերպված Հնչակեան գրոշի տակ՝ քաջարի Զէյթունցիներն ապստամբ են և գրաւած Զէյթունի աշաւոր զինանոցը, գերի առած թիւլք 600 զօրքեր և գրաւած ուրիշ թիւլքական զիւղեր՝ իր շրջակայքում, ազգային սուրբ դատիր դրոշակն են ծածանում յաղթական կերպով և շրփութեան ու պարտութեան ենթարկում սուլթանին ու նրա բազմաթիւ զօրքերին: Այս երկարատև ու հաստատ դիմադրութիւնն արինարուու թշնամուն և կատարեալ յաղթութիւնը — յաղթութիւն է հայկական դատի: Հայութեան վրայ մի մեծ պարտականութիւն է ընկնում այսօր. նա պէտք է ամեն կերպ ջանայ գրամական շուտափոյթ և մեծ օգնութիւն հասցնել Զէյթունին: Յայտարարում ենք, որ այսուհետեւ Զէյթունի կատարեալ յաղթութիւնը կախված է միայն այդ օգնութիւնից. հակառակ դէպքում՝ եթէ Զէյթունն անաջողութիւն ունենայ և կամ գուցէ աղէտի ենթարկվէ, գրա պատասխանատուութիւնը կընինէ հայ հասարակութեան վրայ: Անը այդ յայտարարեցինը արդէն անցեալ անգամ, անում ենք այն և այժմ: Արանով կոչ ենք անում հայ հասարակութեան և յատուկ հանգանակութիւն ենք բացում „Հնչակ“-ի էջերում ի նպաստ Զէյթունի և Ալիկինայի այլ տեղերի ապստամբութեան:

Դրանձական նպաստները պէտք է ուղարկվեն „Հնչակ“-ի Խորագրութեան հասցեին:

Նպաստ Զէյթունի ապստամբութեան կուսակցութեանս Գանձարանում արդէն ստացվել է թիւլքիայի X. — քաղաքից 480 անդիսական ոսկի. Գ. մ. N. քաղաքից Տ-ից 50 անգլ. ոսկի, Ն.-ից 10 անգլ. ոսկի:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆ.

27 Եպեմ. 95.

ՖԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ԴԵՊԵՐԵ.

Երեան ամիսները զորվում են՝ արագընթաց ու եղելական:

Հրէշաւոր դահապետը, աշխարհահռչակ

մարդասպանը, նաև, որի անուննէ դժոխատիպ սուլթան, այդ եղբայրը եւրոպական թագակիրների, մնլեզնած՝ կատարում է իր զարհուրելի ոճրագործութիւնները: Բայց հայի ապստամբութիւնն ու արիւնն իրան սուլթանի ու նրա տէրութեան ճակատագրի թելի կծիկը քրքրեց ու բացեց և զրաւ օրհասական մկրտի երկու ծայրերի մէջ: Կորա գահը խախտվել է, բայց գեռ կանգուն է, որպէս մի չարանենգ ու ստորացնող ծաղը քաղաքակիրթաշխարհի գէմ:

Եյս վերջնը, Խորօպան, ուզում է նրան գըլորել — և չէ յանդգնում՝ վախեցած իր սեփական ճակատագրից, վախեցած այն ընդհանուր խառնաշփոթ մեծ աղէտից, որ իր այնպիսի քայլ կարող է պատճառել: Եւ այդ վեց հզօր մեծերն՝ անգօր թղուկներ են հանդիսանում այն արիւնախում բարբարոսի առջև, որ վայրենի կատաղութեամբ իր սուրն է պատեցնում օդում, զարնում մէկ ամբողջ ժողովովի զիլին — և մնում անգատիթ, հաղարաւոր, տասնեակ հաղարաւոր մարդկանց դիմակները կոխելով:

Խորօպայի եսամոլ և ամեն տեսակէտից դատապարտելի՝ անորոշ զիրքն ու անվճռականութիւնը մի տեսակ գործակցութիւն է դառնում ստորագրարշ թիւլքիայի հետ, որով և պատմական մի մեծ յանցանք: Ուղարկած իրանց նաւատորմերը թիւլքական ջրերը՝ եւրոպական տէրութիւնները տակաւին բաւականանում են իրանց քաղաքակիրթ աչքով միայն զիտել անլուր մարդկանց դասպանութիւնների, մարդկային հէկատոմբների սարսափելի տեսարանը: Նրանք տակաւին պաղ մըտքով ու արիւնով բաւականանում են միայն համարել հայերի զիմաները, մինչդեռ միւնոյն ժամանակ ընկղմնական մերքին ստոր ինստրիգների ու գաւերի աղբում:

Բայց ի՞նչ փոյթ նրանց. չէ որ — թէկ լոկ իրանց աչքին — իրանց պատիւն ապահովված է նկատվում... բայց թէրեւ մէկ ամբողջ ժողովուրդ աշխարհի երեսից ջնջելու պայմանով...

Եւ մեր ներկայ աղէտը մենք այսօր զիմանուրապէս պարտական ենք ուռւաց տէրութեան, որ Աստունի դէպքից ի վեր մինչև վերջերս շարունակ դաւեր էր լարում մեր գէմ: Կա գաղտնապէս վատահայնում էր սուլթանին իր բարեկամական

զգացման մէջ դէպի նա, խորհուրդ էր տալիս նրան հաստատ կանգնել իր մերժումների մէջ, նրա գեսպանը համբուրում էր կեղտոս Այինդ փաշայի հայի արիւնով ցօղված ճակատը — մինչեւ որ Ա. Պոլսի պատմական ջցցից յետոյ այդ ամենը երեւան եկաւ ջրի երեսին ինսորիգների խոր յատակից: Բայց Ոռուսաստանը դրանից յետոյ էլ, շարունակեց իր ինսորիգները, որոնք սուլթանին վստահութիւն ներշնչելով, որ մենակ չէ մնացած, նաև քաջութիւն ներշնչեցին այդ վավաշու խալիֆային, պատրուակ բռնելով հայ յեղափոխական շարժումները, սկսել իր կատաղի կոտորածը: Եւ այդ արեւան պատասխանատութիւնը եթէ ընկնում է Ենոպիայի վրայ իր անվճռականութեան շնորհով, աւելի շատ ընկնում է Ոռուսաստանի վրայ իր դաւելի պատճառով: Ոռուսաստանը ձրգտում էր ստեղծել այնպիսի մի վտանգաւոր ու անիշխանական վիճակ թշրիփիայում, որ երկիւղ ներշնչելով Ենոպիային խաղաղութեան խախտման խրտությակով եւ այգալիսով մինչեւ մի յայտնի ասախճան չքորացնելով նրան, մի գեղեցիկ օր ինքը Ոռուսաստանը, պատրուակելով իր դրացի երկրի վիճակը, որ իր սպառնալիք է իր հողերի ապահովութեան, ներս թափանցէ Հայաստան, գրաւելով այդ երկիրը, ջեղուիտաքար ծածանելով մեր երկրում „քրիստոնեաների ազատման“ գրօշակը: Գրաւում... այն, իւրացումն Հայաստանի: Եզաւում... այն, թիւլքահայերին էլ զցել ուռսական բռնութեան տակ: Վակայն այդ վտանգի միջոցին և հէսց այն ժամանակ, երբ նըման թնդացող որոտի՝ զլորվելով զիւղից զիւղ, քաղաքից քաղաք, գաւառից գաւառ, մի դժոխային աղմուկով ու շոխնթով, խալամական գազանային մոլեգնութիւնը, խարդախ ու արիւնկզակ խալիֆայի հրամանով, ջարդում էր թշուառ հայութեանը — այդ խառնիխուռան իրարանցման ու սարսափագու աղաղակների ու արեան միջից յանկարծ շեշտակի տնկվեց Եզաւութեան գրօշակն անմահ Զէյթունի փառաւոր ու ապատամբ լեռան գագաթին:

Ոչ, հայերն ուզում են մի բան և վճռել են այդ նպատակին հասնել — իրանց ապատութիւնը: Եյտ էր Զէյթունի բարբառը, որ խիեց եւրօպական աէրութիւնների ականջին: Ենոպիայի ազատամիտ թէրթէրը մեզ ողջունեցին — ծիշդ է, երկչուութեամբ. իսկ Ոռուսաստանը, օգտվելով կաթողիկոսի անտակտ մէկ ընթացքից, Նէլիդօվի բերանով փրփուր թափեց հայ յեղափոխականներիս վրայ: Եւ այդ արդեօք ամենալաւ ապացոյցը չէ, որ մեր յեղափոխական շարժումներն արգելք են հանդիսանում ուռսաց կառավարութեան գաղտնի գաւելի ու հաշիւների պակման: Կա

կուզէր տեսնել Հայաստանը մէկ անխօս ոչխար, որին կարելի է գողանալ նոյնչափ հեշտութեամբ, որչափ և մորթել: «Նա ճգնում է ձգձգել հայկական խնդրի լուծումը — թէկուզ բոլոր հայերի կոտորման գնով, — մինչեւ որ յարմար բռպէ կը ներկայանայ գրաւելու և իւրացնելու Հայաստանը: Հակառակ շահեր ունեցող եւրօպական տէրրութիւնները միջամտեցին: Ատեղծվեցաւ այն արուեստական „միութիւնը“, որ այժմ ունեն վեց մեծ պետութիւններն Անկելեան խնդրում: Եւ ահա երեւան է գալիս մի նոր հանգամանք: Խընդիրն այժմ Հայաստանում բարենորոգումներ մըտցնելու մէջ չէ միայն, այլ ամբողջ թշրիփիայի քաղաքական վերակազմութեան մէջ է, հիմք դընելով նրան 1876 թ. մի Վահմանակրութիւնը, որը, ումանց կարծիքով, անհրաժեշտ է հաստատել, թէկուզ սուլթանի գահընկեցութեան գնով: Եւ այսօր մենք սպասում ենք, թէ ինչ կանի Եւրօպան. արդեօք նա կը շատանայ միայն սպառնական խօսերով, թէ գուծի կը զիսէ. արդեօք վեց պետութիւնների միութիւնը կը լինի անգործութեան դաշնկը, թէ կը լրացնեն վերջապէս նըրանք իրանց ստանձնած պարտականութիւնը դէպի հայ ժողովուրդը:

Եւ մինչ այդ է կատարվում մի կողմից, միւս կողմից 15 հազար ապատամբ յաղթական Զէյթունցիններն ահա արդէն մէկ ամիս է, ինչ իրանց հերոսական դիրքն են պահում, մինչ թիւլքական մեծաթիւ զօրքեր, չէրքէզներ, քիւրդեր, թիւրք խուժաններ տասնեակ հազարներով շրջապատել են նրանց, բայց և չեն յանդգնում մրցել քաշերի հետ: Զէյթունցինները քաջ իմացան իրանց զործը. Զէյթունցինները զուր չէն վստահ իւրանց արիութեան վրայ: Հզօր էր ազատութեան, անձնագույնութեան ու եղբայրութեան այն ձայնը, որ արձագանգ տվեց հազարաւորների շարքերում, խօսեց նրանց սրտի հետ, եղաւ նրանց նշանաբանը, նրանց հաւատը, նրանց բաղզը, նրանց ոգեւորութիւնը, նրանց նպատակը, նրանց սուրբը ու փրկարար տանջանքն ու արցունքը: Հնչակեան Կուսակցութիւնը, տալիններից ի վեր ինքն արձակող այդ մեծ ձայնի, աւելի մեծ ուժով այն հանեց Ա. Պոլսում, նրա արձագանգը սահեց ու թնդաց Կիլիկիայի լեռներում, նա առաջ խաղաց և տասնեակ հազարաւոր քաջերը հետևեցին նրան, այսօր զրօշակակիլիներ հայութեան ապատութեան:

Գրանում, վճռական անձնագույնութեան այդ հզօր ձայնի մէջ է այն մէծ արիութիւնը, այն բարոյական հսկայական զօրութիւնը, որ Զէյթունի առաջ ծոել տվեց սուլթանի մէջքը, խոնարհեցրեց նրա զլուխը, մերկացրեց խալիֆայի ամբողջ ապականված բարոյականը, վախկոս բը-

նութիւնն ու խախուռ զիրքը և հնչեցրեց նրա թագաւորութեան ոչնչացման զանգակը։ Դրանում, այդ հզօր ձայնի մէջ է այն սուլր ողեւորութիւնը և ահաւոր ոյժը, որ ամբողջ պառաւ եսամոլ ու շահասէր Եւրօպային, սկսած Սոլանտեան Ովկէանոսից մինչև Ալբիր, հիւսիսային սառնամանիթից մինչև Վֆրիկայի ջերմ ափերն ու Եւսաբիայի այրող հողերը, անցնելով բոլոր եւրօպական թագակիրների զլիով, ցնցեց ու շարժեց հիմնովին, վասնգի ու սպառնական իրաւանցման մէջ զցեց նրան, տակն ու վրայ արեց նրա բոլոր հաշիւներն ու քաղաքականութիւնը, խախուց նրա հաւասարակշռութիւնը, փոշին տակից հանեց մոռացված Դաշնագրութիւններ։ Այդ ձայնը, այդ գործը փոփոխակի կերպով զարմացրեց ու ապշեցրեց, զյուրացրեց ու հիացրեց Եւրօպային, որ սպառնական մեծ ապացոյցներով տեսնում էր ստրուկ ու անյայտ հայի ինքնածանաշութեան, քաղաքական հմտութեան և քաղաքացիական արիութեան ապացոյցները, և դա մինչ այն աստիճան, որ այսօր „Standart“ անգլիական պաշոնսկան լրագիրը խայթված գաղանի պէս աղաղակում է, թէ „հայ յեղափոխականները յանդրդնում են լոկել Եւրօպայի ձեռքից Սուենեան խընդիրը և ինքները լուծել“։

Կ. Պօլսի և Զէյթունի յեղափոխական ձայնը, հայկական աղաղակն ասաց Եւրօպային, որ հայր որոշել է յաղթել. իսկ յաղթված կը լինի միայն այն ժամանակ, եթք հայերի համար իրանց հայրենիքը կը լինի այլ ևս գերեզման։ Եւ այդպիսով այդ „մի բուռ“ մարդիկն իրանց կամքի ահաւոր զօրութեամբ և յանուն իրանց անկեղծ սիրոյ դէպի հարազատ ժողովուրդը, համարձակութիւն ունեցան իրանց ձեռքն առնելու այդ ժողովուրի ճակատագրի զեկը, որով վարում են այսօր սարսափելի փոթորկի հանդիպած նաւը գէպի փրկող ափերը։

Շարունակենք նոյնութեամբ։

ԵՊՍԵՄԲ-ՌՈՒԹԻՒՆԵ ԿԻԼԿԻԵՅԱԿԱ- ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.

ՑԵՂԹՈՒԹԻՒՆ.

Հալէպ, հոկտ. 21 — 2 նոյ. 95.

Հնչակեան կուսակցութեան նուիրական զրօշը յաղթութեան գագաթնակէտին վրայ կը ծածանի այժմ։ Կիլիկիա, ինչպէս նաև Միջագետի շատ մը քաղաքներու մէջ ցաւալի և ուրախառիթ լուրեր իրարու կը յաջորդեն։ Վերջապէս Կիլիկիոյ յեղափոխական հրաբուխն ալ ժայթեցաւ սաստկագին։ Ներկայ ամսոյս 15-ին կիւրակէ օր Զէյթունի և Մարտի մէջտեղ եղող հեռագրական թելերը կտրուեցան։ Կիլիկիոյ Երաբու, Ճի հան գետն ալ վերուց իւր կամուշը լեռնային

յեղափոխականաց սահմանը գծելու և թշնամիներու անցին ըլ թոյլատրելու համար։ Եօթն օր շարունակ ըսպասեցնք, բայց ոչ նամակ և ոչ ալ հեռագիր եկաւ։ Վերջապէս առջի գիշեր Ալպիստանի գայմագամէն (Զէյթունէն 12-13 ժամ հեռաւորութեամբ գազա մ'է) պաշտօնական հեռագիր մը եկաւ, որ կաւետէր Զէյթունի յեղափոխականաց յաղթութիւնը հետեւեալ կերպվ։ —

”13,000-ի մօտ հայ զինուորներ Զէյթունը պաշարեցին։ Մեր Վրշային (Պօրանոց) 600-է բաղկացեալ զօրքերը թշնամոյն ահագին և քաջազէն բանակը տեսնելով շուրեցան։ Դիմագրութեան երեւակայութիւնն անգամ իրականացնել անկարելի էր։ Կառավարութեան բոլոր պաշտօնեայք զօրանոցը փախան և ապաստանեցան։ Թշնամին առանց փամիուշտ մը իսկ պարպելու նախընական վէնքի գիմեց՝ Վրշային մէջէն անցնող առուտակը կտրեց։ Զօրանոցի ժողովուրդը 4-5 օրէ աւելի ծարաւի ըլ գիմանալով յանձնատուր եղաւ հայերուն։ Զօրանոցի բոլոր վէնքերը, զոնց հետ երեք կրուգի թշնամինօթ և ամեն ինչ առին, բոլոր զօրքերն ալ գերի բռնեցին։ Գերիներուն ջարդ ըլ տուին, ընդհակառակը շատ մարդարաբար վարուեցան, մինչև անգամ պաշտօնէից կանանոցին համար հայոց դպրոցը տուին հանգիստ ընելու։ Զօրքերէն մի մասը փախուստ տուած են, անոնցմէ միայն երկու հոգի Ալպիստան եկան և ահա անոնց պատմութեան վրայ է, որ ներկայ տեղեկագիրը կուտամ։“

Ա իլարէթի համայն կառավարութիւնը սարսափահար եղած է յեղափոխականաց անառիկ գիրքէն և նամանաւանդ սոյն անդրանիկ յաղթութենէն։ Սուլթանն ալ բոլորովին յապուշ կրթած է։ Կայսերական իրատէ մը տուած էր Զէյթունի վրայ 16,000 զօրք ուղարկելու համար, բայց Ալպիստանի վերոյիշեալ հեռագրին վրայ՝ սուլթանի հրամանն անմիջապէս փոխուեցաւ, երէկ բէտիֆներն ետ կանչել տուին, կրթեալ կանոնաւոր զօրք պիտի ուղարկեն։ բայց մենք այն վստահութիւնն ունինք որ Զէյթունի անառիկ լեռան վրայ այսօր անկախութեան փողը հնչեցնող 15,000 կատաղի և քաջ յեղափոխականներ 160,000 զօրքի ալ կարող են դիմագրել, եթէ ժամանակին նիւթական օգնութիւն համնի իրենց կեցցէ Զէյթուն։

* * *

20Բ-ՄԱՐԶՈՒԱՆԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.

3 — 15 նոյ. 95.

Զօր-Մարզուանի ապատամբութիւնը հեռագրած էր. այժմ կուգամ գրել ձեղ այդ ապատամբութեան ինչ հանգամանիներու տակ կատարութիւնը։ Անցեալները գրած էի թէ չէրքէղները և թուրքերը միացած գրաւած էին Օձագլը և Էօզէրլը գիւղերու ագարակները, հունձերուն կրակ տուած, տուները յափշտակած և մի քանի մարդիկ ալ մեռցուցած։ Այդ գործը կատարելն յետոյ տեսնելով, որ կառավարութեան կողմէ երբեք արգելք ըս կայ իրենց շահատակութիւններուն, այդ ժամանակ լուր կուտան դրացի գիւղերու թիւրքերուն և չազարէն աւելի պաշտօղուգներ կը յարձակին նորէն Օձագլը և Էօզէրլի վրայ։ այդ երկու գիւղերն ալ թիւրքախառն ըլլալով հայերը կը տեսնեն, թէ դիմագրութիւնն անօգուտ է, գէպի Զօր-Մարզուան կը փախչին։ Պաշտօղուգները գիւղը բոլովին թանելէ վերջ տուները կրակի կուտան։ 500-

էն աւելի եղող պահապան զօրքն այդ ամենը կը տեսնէ, բայց բնաւ չի միջամտեր, և մինչեւ անգամ՝ զօրքերուն հրամանատարը իրեն դիմող հայերուն կը պատասխանէ ոմենք հրաման ըռնինք ատոնց վրայ կը ըստակ ընելու և եթէ մինչեւ անգամ հրաման ալ ունենանք, չենք կարող ընել, որովհետեւ կրնան մեզ ալ սպանել։⁴ Հրամանատարի այդ պատասխանը կը ստիպէ հայերն ինքնապաշտպանութեան դիմել և ամեն պատահականութեանց առջեւ պատրաստ գտնուիլ։

Վերջապէս Նոյեմբեր 11-ին (ը. ե.) 1700 թիւրքեր և չէրքէղներ կը յարձակին Զօք-Մարզուանի վրայ: Հնչակեան քաջերը կազմակերպեալ և տեղական ժողովուրդն ալ պատրաստած ըլլ-լով, արիաբար կը դիմադրեն: Հրացանաձգութիւնը երկու կողմէն կը սկսի առաւոտէն մինչեւ երեկոյ. գիշերը հանդստանելին վերջ առտուն նորէն կը պահին պատերազմի. այսպէս կը տեէ ամեղոջ երեք օր: Ականատես յոյն մը, որ ինքն ևս անձամբ մասնակցած է կոռուին հայերու հետ թիւրքերու գէմ, հետևեալ մասնամասնութիւնները կը հաղորդէ:

„Հայերն երեք օրէ ի վեր պատերազմ կը նեն. հայ դիւղացիներէն մէկ մեռած կայ և երկու վիրաւոր, մինչդեռ թիւրքերու և չէրքէղներու կողմէն 300-էն աւելի սպանուած կայ. պատճառն այն էր, որ հայերը դիտնալով թիւրքերու դիտաւորութիւնն օրեր առաջ գրաւեցին ամուր տեղերը և շատ վարերու մէջ ալ իրենց համար ամրութիւններ շինեցին. թշնամին իր զէնքի կանոնաւորութեան և բազմաթիւ ըլլ-ալուն վրայ վստահելով՝ միշտ առաջ նետուեցաւ և միշտ կորուստով ետ մղուեցաւ. երեք օր շարունակ կոռուելին վերջ իրենց կորուստին վրայ կատաղած՝ թուրքերը Ատանայի կուսակալութեան դիմեցին հեռագրով:“

Վտանայի կուսակալը զօրքերու փաշան Ալի-պէտէր ուղարկած է 400 զօրքով, որոնք առաջուց այստեղ գտնուած 1000-ի հետ միացած են: Այդ Ալի-պէտէր նաևակիս թիւէն մէկ օր առաջ եկաւ, թիւրքերը և չէրքէղները հանդարտեցուց և ահա այժմ հայ ապստամբներուն 24 ժամ պայմանաժամ տուած է, որ իրենց բոլոր զէնքերը յանձնեն, եթէ ոչ կրակի պիտի սկսիմ պատասխանած է: Հնչակեանք մտադրած են չը յանձնել իրենց զէնքերը, համոզուած ըլլալով, որ յանձնելին վերջ կառավարութիւնը բոլորովին անզէն գտնելով պիտի կոտորէ ամենքը: Այլ ևս չը դիտենք թէ ինչ պիտի լինի: 24 ժամը լրանալու վրայ է. հայ քաջերն ուխտած են կամ յաղթել քաջութեամբ, կամ մեռնիլ հերոսի մահով:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԻԼԻԿԻԱՑԻ. *)

ԿԻԼԻԿԻԱՆ ԱՊՍԱՎԲՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ.

24 սեպտեմբեր 95.

Վարդկութեան աշխարհին մէջ ժանտախտ և հայ հասարակութեան դահիճ եղող՝ հիւանդ մարդուն կառավարութիւնը օրէցօր կը կրկնապատէէ և կը քառապատէէ իր արմատացած խստութիւնք ու վայրենի ութիւնք...⁵

Կիլիկիա հայ ժողովրդեան սոսկալի աղքատութիւնը իր գագաթնակէտին հասեր է... շասեմ հարիւրա-

ւորներ՝ այլ հազարաւոր ընտանիքներ նօթի ու մերկամարդին կանցնեն իրենց այս օրերը... Բազմաթիւ անհատներ յուսահատական արտասուաց հեղեղուներ կը թափեն իրենց աչքերէն... Հարիւրաւոր կամբնկեր երեխաներ, հազիւհազ մէկ քանի ամիսներ լցու աշխարհ կը ծնուեն և շուտով կը մեռնին: Վասնզի կամբնտու մայրը չունի մի պատառ կորեկ հաց, որ ինքն ուտելով կաթ տայ:

Հազարաւոր երիտասարդներ, իրենց կայտառ գէմքերնին կորուսած մէկ տեղէն միւսը կը վազեն, որպէսզի օրապահիկ հացերնին ճարեւն...⁶

Այս սալասափելի վիճակին ենթարկուող ժողովուրդը ինչ ընելիքը չը գիտեր... Ըատշատեր եթէ գիտենային որ կրօնափոխ լինելով՝ կարող կը լաւ մէկ պատառ հաց գտնել, մէկ վայրեւան իսկ չէին սպասեր: Բայց խնդիրը այն է, որ այն յայն ալ չը կայ: Անուանական կառավարութիւնը չը նայելով այս ամենին, ալ աւելի կը խստացնէ ժողովրդեան անվերջ ցաւերը:

Թոնիւրբական ապականեալ բանտերը նորանոր հայ բանտարկեալներով սկսած են լեցուիլ, որոնցմէ նշանաւորագոյնն է Հաճին քաղաքի բանտը... Սոյն հայաշատ քաղաքի բանտը նշանաւոր է իսկապէս հայաշատ բանտարկեալներով... Օր չանցնիր, որ կառավարութիւնը ոչինչ պատճառներով ձերբակալութիւններ չընէ...⁷

Վհա ձմեռը կը մօտենայ. ժողովուրդը ձմեռուածն ծանրը օրերուն մէջ ապրելու համար պաշար պէտք է պատրաստէ: Ժողովրդի այս ծանր հոգը բաւական չը լինելով ուրիշ նորանոր վիճեր, նորանոր վիճեր կը բացուիր իրեն առաջ: Սնանկացած կառավարութեան անօթի զապիթիաները տունէ տուն շրջելով „տոնքքութիւնը“ կը պահանջնեն: Վայ այն հայի գլխին, որ համարձակի լսել թէ չանիմ... Գանակոծելով, թքելով և հայհոյելով անմիջապէս կը տանին բանտ,... Ասկէ տաճն և հինգ օր առաջ 500 հայ բանտարկեցին: Կառավարութիւնը անհոն ունեցած եղները և անսաւուները գրաւելով մէջ զաթի հանեց, այնպէս որ երկու սկի արժողութեամբ եղջ կամ էջը 20-25 դահեկանի ծախսեց... Եւ անոնց տէրերը նախատելու համար եղնին կամ իշուն ճակատին վրայ, իրենց տէրոջը անուները գրած, փողոցէ փողոց պատցունել տուաւ...⁸

Վհա վնասներ քիչ տեսնելով, տակաւին օրերով և շաբաթներով ալ խեղճերը բանտարկած կը պահէ: Որովհետեւ անսունները շատ ցած գնով ծախսուած լինելուն, գեռ տուրքին ամբողջ գումարը չէ գոյացած:

Տեղոյս գայմագամը, որ սուլթանի կառավարութեան երկապագուներէն մին է, մէկ ք նի բանտարկեալներու լսածն է թէ, „Եթէ թողոնք որ հարստանաք, դոք է բմէն իստան կեա վուրն երէն աւելի գէշ կը լինիք. Այդ պատճառաւ ձեզմէ միշտ առնելու ենք որ, աւուր հացի կարօտ մնաք“...⁹

Վիւս կողմէ սոսցդ աղքերէ կը լսենք թէ, Հաճինի կառավարութիւնը՝ Զամուտանցաւ դէպահանաք, Հոռահանդ է տուեր որ Հաճինի շրջակաները գտնուող բոլոր թիւրք, քիւրտ և չերքէղ դիտաւոր կրկնապատէէ և կը վայրենի հայրէկին յարձակում գործել տայ... Նըմանապէս միւնոյն հրահանդը տուեր է Ասի, Ատանայի, Արքունին և Տարածականի ժողովրդեան:

Ասկէ երկու շաբաթ առաջ Տարսօնի շրջակայ տաճին խուժանը կառավարութեան կողմէ գրդուելով, յար-

*) Տես „Հնչակ“ Nrs 19 և 20.

ձակեր է Տարսոնէն վեց ժամ հեռաւորութեամբ Լամբարծնի վրայ (ուր Տարսոնի ժողովրդեան դաշտավայրա-
մառանոցն է), հայ հասարակութեան շատ մը վնասներ
տալերնէն վերջ՝ կը յարձակին բողոքականաց դպրոցին
վրայ: Դպրոցի տնօրէնը Ամերիկացի մի միտօնար է. ե-
թէ խիստ միջոցներ ձեռք չառնէր, ամեն ինչ տակն
ու վրայ եղած էր: Սցնանման դէպքեր միշտ տեղի
կունենան Աիլիկիայի ամեն կողմերը...

Իրարու յաջորդող դէպքերը մեզ այնպէս ցցց
կուտան, որ կառավարութիւնը Հայաստանի մէջ ըրած
բարբարոսութեանց ծրագիրը Աիլիկիա ալ գործա-
դրել տալ կուղէ...

Անտիռքայ դէպքը մեծ մտատանջութիւն պատճա-
ռեց կառավարութեան: Աիլիկիոյ մասին ունեցած բոլոր
կասկածներ իրականացան, դէպք մը՝ որոյ տեղի տուած
էին անկախ հանգամանքներ, սարսուեցուց թէ կառա-
վարութիւնը և թէ իւլամ ժողովուրդը: Ամիս մը ա-
ռաջ Ամերիկեան հպատակ պ. Գուրգէնի դրամն ու դո-
քերը ճանապարհորդութեան ատեն յարձակած և յա-
փրշտակած էր անօթի կառավարութիւնը: Երբ ինքը
գուրգէն գնաց իր գրամը պահանջնելու, զանի ձերբա-
կալեցին և մինչ օրս Հայէպի զնդանի մէջ կը տա-
ռապի. դրամը կը մնայ կուտակալի մօտ: Այս դէպքէն
յետոյ Քիլիսի մէջ ցերեկ ատեն թուրք սրիկաներ կը
կունեն հայ կանանց գտնուած բաղնիքը: Մի հայ ալ
իշու վրայ նստեցուցած և երեսն ալ մուր բսած՝ կը
պտտցնեն քաղաքի շուկային մէջ և այնիքան կը ծե-
ծեն որ կիսամեռ կիյնայ գետին: Կառավարութիւնը
ձեւական միջոցներու դիմելով՝ մի քանի անձ կը ձեր-
բակալէ և ապա ամենքն ալ թող կուտայ: Պէլէնի մէջ
իւլամ տղաքներ իրենց մեծերէն դրդեալ՝ կը քար-
կոծեն ու կը ծեծեն հայոց դպրոցական տղաքները,
որոնք իրենց Պօլիսէն դարձող քահանաները դիմա-
ւորելու գնացած էին. այս դէպքին մէջ կը վիրաւո-
րուին երկու դպրոցական տղաք և մի քանի կանանց
գլուխներ քարի հարուածներէն ծանրապէս կը վնասուին:

Օգոստոս 21-ին 2պահարդուանի Էօղէրլի հա-
յաբնակ գիւղ մէջ ցերեկ ատեն ոչխարի մը խնդրոց
առթիւ տեղական թրքեր հայոց վրայ յարձակելով
գնդակահար կը ձգեն երկու հայ և երեք հատ ալ
դաշոյնի և փայտի ծանր հարուածներով. հայեր, որ
անպատրաստի և անզէն էին, հազեւ կը յաջողին երկու
հատը տպալէլ: Այս արիւնոտ դէպքին վայրը ներ-
կայ կը գտնուին տեղույն կառավարութեան պաշտօնեայք,
բայց փսխանակ չարագործները ձերբակալելով՝ կը փախ-
ցընեն և կը ցրուեն: Հայեր անմիջապէս կը հեռագրեն
Պատրիարքին և մեծ եպարգուին: Օգոստոս 23-ին ձէ-
պէլի կառավարիչը 30 սատիկաններով կուգայ կը պա-
շտրէ այդ հայ գիւղերը, ըսելով թէ՝ ապստամբած են.
Նախ կը պահանջէ 30-ի չափ քաջ երիտասարդներ
որք, կըսէ չնչակեան հրոսակներ, յեղափոխականներ
են: Գիւղացի քահանայք և բողոքականաց քարոզիչը կը
դիմադրեն և կը պատասխաննեն կառավարչի մարդիկնե-
րուն թէ՝ մենք ապստամբ չենք, օրինական տուբքերնիս
կուտանք, բայց գիւղերէն ձանձ մը անդամ չենք յանձ-
ներ գիւղնալով կառավարութեան նպատակն ու չար-
մառութիւնը: Նոյն գիշեր Օձագլը հայ գիւղակի մօտ
տեղական թիւրքեր գնդակահար կընեն իր ագարակէն
դպրոցը 25 տարեկան քաջ երիտասարդ մը. մահը վայր-
կենական կըլլայ: Արիւնոտ շապիկը կը տանին կառա-
վարչն, կը բողոքեն խստիւ թէ՝ ապահովութիւնը վեր-

ցած է, բոլոր հայոց կեանքը վտանգի է: Թիւրքեր մի քա-
նի վկաներ կը հասցնեն թէ՝ սպաննուածը արդէն քօ-
լուայէն մեռած և հայերն ալ վերջին բուզէին գնդա-
կով զարկած և թուրքերուն վրայ ձգած են: Կառավա-
րիչը կը վոնտէ հայերը, թէ գնացէք դուք ալ վկայ
բերէք սպաննուածիւնը հաստատելու համար: Հայեր
այժմ ճարահատեալ ստիպուած են անձնապաշտպանու-
թեան համար զէնքի զիմել և բացարձակ զէնք կը
կրեն և կը պատրաստուին, որպէսզի եթէ յանկարծ յար-
ձակում մը տեղի ունենայ. Կարող ըլլան իրենց զաւակաց
ու ընտանեաց կեանքը պաշտպանել: Կառավարութիւնը
բոլորովին շփոթած է: Հայ և թուրք ժողովուրդը իրա-
րու դէմ լարուած են. տգէտ կառավարութիւնը տն-
կարող պիտի գտնուի իր վայրենի միւսիւլման ժողովուր-
դը զայիլու, եթէ ընդհարում մը տեղի ունենայ: Զգր-
Մարզուան և իւր ըրջակայ հայ գիւղերը, պաշարման մէջ
են: Ճամ առ ժամ արիւնահեղութեան դէպք մը ան-
խուսափելի կերեկի,

Յիշեալ կառավարիչը իր զինւորներով եկած նըս-
տած է գիւղին մօտ հայոց գերեզմանատան մէջ և կու-
զէ հոն զօրանոց մը շինել տալ, որուն յատակագիծը
զրկած է Պօլիս: Հայեր վերջին ծայր գրգռուած են այս
մասին:

Աներկիւլ.

Ք Ե Ա Մ Ա Խ Ի Դ Է Պ Ք Ե Բ.

(Շարունակութիւն *)

Աւագ վանից ս. Լուսաւորչի և ըրջակայ գիւղօրէից մէջ
զօրաց քիւրտերու և թիւրքերու թիւն անբաւական համա-
րելով, երկրորդ վաշտ մը ևս զօրը աւելցուեցաւ հապ-
ձեպով. բաց ատարի հեռագրեցին Արաբկիր, Գարահիսար,
ԳուրոււԶայ և Կիրճենիս, որ այդ տեղեր գտնուած ոս-
տիկան զինւորները և թուրք ու քուրդ խառնիճաղանձ
ամբոխը հաւաքեն և զըկեն Սեպուհի և Աւագ վանքի
լեռները: Այս հրամանին համաձայն խառնիխուուն զին-
եալ կը դիմեն հոն: Համիտ ըսուած պէյը իր խու-
ժանով կուգայ կը միանայ կայսերական զօրաց հետ,
նոյնպէս թաշիր փաշան և կսէսցի հաճի Շերի-
ֆը կիւրլապիցի քիւրտերով մէկուել և իրենց ար-
բանեակներով կը հասնին հոն, վերջապէս 4-5000-ի
մօտ բաղմութիւն մը կը խոնուի այդ նուիրական վայ-
րերու մէջ, որոց առ ձեռն ունեցած զէնքերը բաւտկան
չը համարելով՝ երկու լեռնային թնդանօթներ ևս կը
զօկուին ի հարկին վանքերը ումբակօծելու դիտաւորու-
թեամբ: Սոյն զինուած ամբոխը մինչև օգոստոս 6 սուրբ
Յակոբայ և Ծախայի վանուց Ճամբաները և ըրջակայ
վայրերը պաշարած ըլլալով 15 օրի չափ երթևեկութիւնը
կը դադրի բոլորովին. ըս մոռնակը ըսել, որ այս միջո-
ցին վանքերու մէջ գտնուած ուտելիք և այլն կսպա-
ռին և կը կողոպտուին զօրաց կողմէ: Օգոստոս 6 կիրա-
կի առաւօտ արշալյոսի ատեն ժամը 9-ին փախստա-
կանաց խումբը կը տեսնուի անապատի ձորին մէջ, 6
ժամու չափաղանց կատաղի պատերազմէ մը յետոյ՝ խում-
բէն 2 հոգի կոպաննուի, 3 հոգի կը ձերբակալւի, իսկ
միւները կանչայտանան մինչև ցայսօր: Յետոյ զօրքը
գարձեալ կուգայ Աւագ վանք կը լեցուի: Եւ կարծե-
լով թէ փախստականը հոն ապաստանած են, կսկսին
գարձեալ, խուզարկութիւններ ընել և հաճի Յակոբը ու
հարսները սաստիկ ծեծել. խուզարկութեան պատրուա-

կաւ կը մտնեն տուները, գտնուած զէնք, անօթք և կահ կարասիք բոլորը կը կողապտեն, հարաներու սնտուկները կոտրելով զգեստները և զարդերը կը թալանեն, ասոնց-մէ զատ վանուց մեջի փեթակները կոտրելով կոչնչացընեն։ Յետոյ կսկաին պօստանները, պարտէկները, բո-լորովին փճացնել, գարիի արտերը և ցորենի գէղերը ձիերու կերցնել, վանքին մէջ գտնուած կորկոտ, հա-ծար, ալիւր, ցորեն, և այլն ամեն ուտելիք և տարե կան պարէնն ու պաշար դուրս լեցնել, եփել տալ բռո-նութեամբ և ուտել, մարադները գտնուած յարդն ու խոտերը դուրս լեցնել և կոխկուտել ու ձիերուն կեր-ցընել և ի վերջը սպառնալ վանքն այրեացաւեր ընե-լու։ Զենք ուղեր յիշել օրական մորթուած ոչխարնե-րուն թիւն ու քանակութիւնը։ Այնուհետև զօրաց կէ-սլն Աւագ վանք թողով մնացեալներն ալ կը դառնան ս. Լուսաւորիչ, ուր գարձեալ կը շարունակեն իրենց խժդժութիւնները, քանի մը օր ալ հոն մնալով ամեն ուտեստ սպառելէ զատ՝ վանքին ունեցած բոլոր ոչխար-ներն ալ կը մորթեն և կուտեն։

Բան առ բան գրի առնել կարելի չէ և նկարա-
գրել այն բոլոր սպառնալիքները և խժդժական արարք-
ները, ողք ի գործ դրուած են վանապետ Գրիգորի իւր
մօր Մարթաի և իւր ընտանեաց վրայ. շաբաթ մը ամ-
բողջ այս խեղճերը սոսկալի տանըանց կենթարկեն,
որպէսզի փախստականաց տեղը յայտնեն: Ասոնցմէ Մար-
թան Երզնկա կը ղըկուի և կը յանձնուի կառավարու-
թեան, որ կը բանտարկէ անպարկեշտ կանանց հետ:
Խսկ Գրիգորի կինն իր մէկ ու կէս և երկու տարեկան
զաւակներով կը փախչի մօտակար ձկէյլի թրքաբնակ
գիւղը և հոն ծանօթ թուրքի մը տուն կը մնայ քանի
մը օր. այս թուրքին անունն է Զայիմ օղլը. յետոյ հար-
սին հայրը կերթայ և զանոնք կը բերէ Երզնկա. Գրի-
գորն ալ տեսնելով որ բոլորովին անխնամ կը մնայ այդ
միայնութեան մէջ և ըս կայ մէկը որ հայթայթէ ի-
րեն պէտք եղած սնունդն ու դարմանը, իր անձը ա-
զատելով Երզնկա գալու համար 300 սկի կաշուք
կը խոստանայ մուրհակաւ հազարապետ Եավեր էֆէն-
տիին, որն որ կարգիլէր իրեն Երզնկա երթալը և կը
հրամայէր Ֆնալ նոյն վանքին մէջ առանց սնունդի և
առանց դարմանի. այս խոստման վրայ զօրապետը կը
թոյլատրէ իրեն որ պատգարակով Երզնկա փոխադիւն:
Գրիգոր այժմ՝ անկողնոյ կը ծառայէ մահամերձ վիճա-
կի մէջ, խսկ ս. Լուսաւորչի վանքը կը մնայ ամայի և
անտէրունչ. վանքին վկասուց որբանութիւնը որոշ ըս
գիտցուիր դեռ՝ երթեւեկութեան անկարելիութեան պատ-
ճառաւ. զօրաց խումբը ասկից մեկնելով վերստին Ա-
ւագ վանք կերթայ, ուր Եկած են կանուխէն միւտտա-
յի ումումին, մոււավինը, միւսթանթըգը և պէլէտիէի բը-
ժիշկն իրենց գրագիրներով ձերբակալեալ 3 հայերու
և սպանուած 2 անձերու քննութիւնները կատարելու

Օօրբերը և պաշտօնեալք կը մնան վանքին մէջ 4
օր ևս. յետ քննութեան պաշտօնեալք կը մեկնին եր-
զընկա. զօրաց հրամանատար հազարապետը կազդարա-
բէ հաճի Յակոբին, որ մնացած կահ կարասիքը քա-
ղաք զբկել տայ և կամ վանքէն դուրս հանէ, որով-
հետեւ ինքը բարձրագոյն հրամանաւ արտօնութիւն ըս-
տացած է վանքերը ռմբակօծելու, քանդելու և այրե-
լու. այս խօսքերը ըսելէ յետոյ կը մեկնի վանքէն հա-
ճի Յակոբին բռնի ստորագրութիւն առնելով, թէ վան-
քին բոլոր վնասներու փոխարէնը վճարած է: Արդ
չենք կրնար մի առ մի թուել մեր կրած բոլոր վնաս-

Ները. այսչափ միայն ըստեմք, որ թէ ս. լուսաւորիչ և
թէ Աւագ վանք ոչ ցորեն, ոչ աղիւր, ոչ կորկոտ, ոչ
հաճար, ոչ խոտ, ոչ յարդ, ոչ իւղ, ոչ ոչխար, ոչ
փեթակ և ոչ իւկ բանջարեղէն մնացած է. մինչև իսկ
հարսներու հագնելիք զարդք կողոպտուած են բոլոր-
վին. այժմ մերկ, կողոպտուած կը մնանք գրեթէ ա-
մենքս ալ. դոք կրնաք որոշել և խելամուտ լինել
պատահած վնասուց որքանութեան և անոնցմէ առաւել
ցաւալին այն է որ Ըսէսը և Գրիգորը մահամերձ վի-
ճակի մէջ կը մնան ցարդ, Մարթանց ալ բանտին մէջ
կը տառապի դեռ, իւկ վախցողներուն կասկածելի վի-
ճակի մէջ ըլլալն ալ աւելորդ կը համարիմք յայտնել:

ԹԵՄԳԱՐԱՅԻ ԿՈՏԱՐԱՁԵԼ

Օգոստոս 1 երեքշաբթի երեկոյեան ժամը 10-ի
ատեները շուկայի մօտ մի քանի տաճիկ չարամիտ ե-
րիտասարդներ կտկին նեղութիւն տալ ծերունի հայ
կող մը. նոյն պահուն ոստայնանկներու առաջնակարգ
վարպետներէն Մովսէս Գրքպէսէլեան վրայ գալով, երբ
կը տեսնէ խեղճ պառաւին կրած չարչարանքը, քաղ-
ցըրութեամբ մը կը յանդիմանէ, թէ սամօթ է, ձեզի
չը վայլեր որ այդ խեղճ ծերունի կինը տանջէք. ա-
սոր վրայ անոնց մէջէն Խպրահիմը Մովսէսի պատույն
գէմ ծանր նախատինքներ կը տեղացնէ լրբորէն: Մով-
սէս շուկայի մէջ գտնուող պատուաւոր համարուած
դրացի տաճիկ խանութպաններուն դիմելով չարամիտ
երիտասարդներու մասին գանգաւտներ ըրած պահուն,
այս վերջները անոր ետևէն հասնելով հոն ալ կըս-
կըսին շարունակել իրենց լսկիրշ խօսքերը, որոնց գէմ
խանութպաններու կողմէն լուութիւն կը պահուի. խեկ
տեղոյն միւտիւրի եղայրը Մուհարբէմ էփէնտի կը պո-
ռոյ՝ նիշըն կեցեր ես, չերթաս սատկեցնես կեալու-
րը. միւտիւրը կայծակի արագութեամբ կը հասնի Մով-
սէսի մօտ և անոր օձիքէն բռնելով գետին կը ձգէ և
կսկսի գետնաքարշ և ոտնհար ընել. ասիկա բաւական
չը համարելով կոկորդն ալ սաստիկ կը սեղմէ խեղ-
դելու աստիճան: Այն ինչ մի քանի հայ երիտասարդ-
ներ կը վաղեն ազտակը կատաղի վագրի ճիրաններուն
մատնուած յուսահատ խեղճ զոհը, ամեն կողմէ խուռն
բազմութեամբ տաճկաց գաղանային յարձակումը տեղի
կունենայ հայոց վրայ: Տեսարանը խիստ ահուելի կը
լինի, սարսափը կը տիրէ ամեն տեղ. թշնամեաց ձեռ-
քերուն մէջ կը բարձրանան մուրճ, աքցան, քարեր,
բիրեր և այն, հարուածներն կը տեղան անխնայ հայոց
վրայ. յարձակողաց խրախոյս կարդալով կը բորբոքեն
աւելի ևս թուրք խուժանին կատաղութիւնը թէ խա-
նութպաններ և թէ ներկայ գտնուող մեծ էփէնտին-
րը հետեւեալ խօսքերով. ովուրուն, կէպէրտըն շու-
շասուն արթըբարը վէ աճէմ սիւրկիւլէրինի⁴: Թուր-
քերը կը խուժեն սրճարաններէ ներս և հոն գտմուող
հայոց վրայ կը խորտակեն աթոռներն ու փայտերը
ծանր վէրքեր տալով անոնց: Վյուպէս շուկայի մէջ
տասնեւեակներով վիրաւորեալներ թողէլէ վերջ, միևնոյն
կատաղութեամբ կը յարձակին հայոց թաղէրը և կըս-
կըսին անդժութեամբ հարուածել աջ ու ձախ առանց
խնայելու կիներու, ծերերու և մանուկներու. գառնա-
գին աղաղակներ և աղլողորմ սաստիկ ճիշեր կը թշն-
դացնեն օդը. խուժանին կատաղի յարձակումն կիներ
և երեխաներ նուաղեալ կիյնան այս ու ոյն կողմէ:
Տ. Գրիգոր քահանայի տան վրայ ալ յարձակում

կը լինի, ուր կային նորա երկու որդիներն ու հարս-
ները. հոգ կատաղի խումբ մը կըսկսի սաստիկ գանա-
կոծել զանձնք անդմօրէն կիրք յագեցնելու աստիճան.
գանակոծեալք հաղիւ կրնան ինքզինքնին տուն նետե-
լով փակել դռները սաստիկ վախի մէջ: Հետևեալ
օրը քահանային մեծ հարար Մարիամ որ յլի էր՝ վի-
ժած է իւր մանուկը, միւս հարսը, որ նոյնպէս յղի
էր, վիժելու կառկածն ու երկիւղը կազդէ. ամեն կողմ
ալ աշարեկ կիներ և մանուկներ նաև ծանրապէս
հարուծեալներ անկողին ինկած են: Եթէ հայոց կող-
մէն փոքրիկ ընդդիմութիւն լինէր, անտարակոյս բոլոր
հայերու դիակներուն վրայ պիտի ողբայինք այժմ, որով-
չետև թուրք խուժանը զինուած էր:

Ծառամզարայի մօտ գտնուող Ավուտմուշ թուրք գիւ-
ղի սրիկաներն ես, որ իրենց չարագօրծութիւներովը
նշանաւոր են հոս, լսելով աղմուկը 40-ի չափ զիներալ

կը հասնին. բայց տեսնելով թէ վիրաւորեալներն ու
գանակոծեալները միայն հայերն են, չեն ուղել իրենց
գժոխային նպատակն ի գործ դնել, լսելով մանաւանդ
թէ թափուր աղասին ստիկաններով հոն կուգայ: Տա-
ճիներն այս յարձակումն ի գործ դնելու պահուն գա-
րահիսարի կառավարութեան ալ լուր կուտան թէ հա-
յերն իրենց վրայ յարձակած են: Երեկյեան ժամը
12-ին ատենները թափուր աղասին 10 հեծեալ ոս-
տիկաններով կը հասնի դէպքին վայրը և տաճկաց ե-
րեկինները կանչելով կը հարցնէ անոնց թէ որքան
մեռեալ և վիրաւոր ունին իրենցմէ: Բնականաբար ի-
րենց պատասխան գոհացուցիչ եղած է, յայտնելով
թէ ոչ մեռեալ ունին և ոչ ալ վիրաւոր: Երբ հա-
յոց մեծերը կը կանչեն և կը հարցնեն, թէ ի՞նչ էր
այս եղածը. անոնք կը պատասխաննեն ու էֆէնտիններուն
հարցուցէք: այս միջցին հայոց վիրաւորեալներէ մի
քանին որը թեթև վէրք ստացողները կը լինին,
ներկայանալով երբ խնդիրը մանրամասնօրէն կը պատ-
մեն, թափուր աղասին կըսէ ու աճայիպ, հէմ տէյէրլէր
շիքայէթ իսէրլէր: յետոյ միւս վիրաւորեալներուն ալ,
որոնք անկողին մէջ են, այցելութիւն կուտայ:

Ծառապուր աղասին հեծեալ ստիկաններով դէպքին
վայրը փութացած պահուն խանճի Քէլ Հասան անուն
անցեալով նշանաւոր թուրք չարագործ երիտասարդն
ես առանց պաշտօն մը ունենալու ձիով հետևած է
ստիկանաց, ինչպէս որ իւր ընկերներն ալ ի վերջո
գնացած են: Քէլ Հասան գարահիսարի շուկայէն ձին
վազմնելով անցած յօյն տղեկի մը ձեռքին ջուրի սա-
փոնները խորտակած և ուրիշ յօյն տղայ մ'ալ կո-
խոտելով մի քանի տեղերէ ծանրապէս վիրաւորած է:
Մէկ կողմէն Ավուտմուշի սրիկանները և միւս կողմէն
քաղաքիս գրգուռած թուրքերը մէկտեղ գալով ան-
տարակոյս մեծ փոթորիկ պիտի հանէին և բնաջինջ ը-
նէին թամզարայի հայերը, եթէ քաղաք հասցուած լու-
րերն ամենափոքր ստուգութիւն ունենային:

Ծառապուր Աղասին գրելով ծեծուղներու և վիրա-
ւորեալներու անունները, հետևեալ առաւօտ անոնցմէ
մի քանին քաղաք կը բերէ. ասոնք էին Մովսէս Գլոբ-
քէսէլեան առաջին անգամ հարուածուողը, Մ. Ղաղար
Ալթունեան, Գրիգոր Թառչունեան, Մանուկ Մինստեան,
Մկրտիչ Մաթախեան, Գրիգոր Զրտագեան, Կարապետ
Միլլէթեան, Մ. Միհրան Կիւչիւճէկեան, Ընդրէսա Կիւ-
չիւճէկեան, Գալուստ Զէքէնեան: Այս վերջինը իւր մէկ
ընկերին հետ ջաղացքը ալիւր աղացած ատեն՝ եօթ
ութ ընկերներէ բաղկացեալ թրքաց մէկ կատաղի խու-

բին խոշտանդանաց կը մատնուի. այս անգութները եր-
կու հայերը նախ կը բռնեն և լաւ մը կը ծեծեն, երք
մին կը յաջողի փակաչիլ, միւսը՝ գալուստը պառկեցներով
մորթելու համար գանակը զինին դրած պահուն, ինեղին
օդութիւն պոռալու ձայնէն հայ կիներ, որը ջաղացքին
մօտակայ պարտեղը գտնուած էին, վրայ հասնելով կը
յաջողին քարերով փակցնել չարագործները: Վերցի-
շեալ 10 հայերն ու էֆէստա անուան տակ բանտարկ-
ուած են. միայն գալուստն երկու օր վերջ անպարտ
արձակած են, յանցանք չունիս եղեր լսելով, վասնզի
քննութիւն կատարուած պահուն չը պիտի կրնային յան-
ցանք մը վերագրել իրեն. բաց աստի անոր վրայ կա-
տարուած մորթելու փորձը, որ չէր կրնար ծածկուիլ,
գուցէ արգելք մը ըլլար հայոց միւս բանտարկեալնե-
րու մասին ի գործ գրուելիք անիրաւ խորհուրդներու
իրագործմանը:

Ծառւրը յարձակողներու խուռան բազմութենէն մի-
այն 4 աղքատ երիտասարդներ բերուած և բանտար-
կուած են, որոնք ստուգիւ մասնակցած են գործին, և
մինչ պարագլուխներն ու գրգուիչները և ուրիշ յան-
ցաւորներ աղատ կը ջրջին, ինեղի հայ վերագրեալ
բանտի միութեան և խստութեան կը մատնուին: Ահա
այս է մեր կառավարութեան արդար դատաստան:

Ծառամզարայի հայ բնակիչներէն գրեթէ կէսէն ա-
ւելին ահաբեկ եղած, այլ ևս ապահով չը համարե-
լով իրենց անձը, դէպքին հետեւեալ օրը Գարահիսար
գիւմած են և իրենց վիճակը միւթասարըֆին ներկայա-
ցընելով դարման խնդրած են: Սնողորմ քաղաքակե-
տը երբէք կարևորութիւն չը տալով բողոքներու ձայ-
նին, վանաւած է իրեն ներկայացողներն ըսելով. նինչ
է եղեր, քանի մը սրիկաններ քանի մը գլուխներ ծա-
կեր են, չէք ամաչեր որ այդպիսի ոչինչ բանի մը հա-
մար կը բողոքէք: Ֆողովուրդն ապահովութիւն չու-
նենալով իրաց այս վիճակի մէջ թամզարա վերագրու-
նալու քաղաքիս հայոց գերեզմանատունը բաց օդի մէջ
անօթի կը տառապի թողով տուններու մէջ անօթի և
անօդնական իրենց թշուառ կիներն ու մանուկները:

Քաղաքիս հայերն ևս այս անապահով վիճակէն
կարի յուզաւած՝ յիշելով միւթասարըֆի այդ սպառ-
նական խօսքն ալ թէ սաստուն պիտի դարձնեմ հոս
ալ՝ և այլ ասոնց նման շատ մը սպառնալիքները, որք
տեղի ունեցած են թուրք տարրի կողմէն, իրենց վըս-
տահութիւնը կառավարութենէն բոլորովին վերուցին և
ահ ու դողի մէջ փակեցին եկեղեցիներն և խանութերը
և սկսան հեռագիրներ տեղացնել մասնաւորապէս քա-
ղաքիս միւթէսարըֆին և միւտտափի (օգնա-
կանին) նկատմամբ, որք բուն չարեաց պատճառներն են:
Երկիցս Եպարգուսին և Պատրիարքարան և երեք ան-
գամ ալ Աբաստիոյ վալիին: Վալիին երկու հետա-
գօթի պատասխանն ընդունուեցաւ, որ յայտնելով թէ
յանցաւորները պատժելու մասին միւթասարըֆին պէտք
եղածը գրուած է, կը հրամայէր բանալ թէ եկեղե-
ցիները և թէ խանութեները, միանգամայն թամզա-
րացիներն իրենց տեղերը վերագրանել: Կառավարու-
թեան բոլոր գործերն այսպէս կատակերգութեամբ կը
վերջանան, մինչդեռ միւթէսարըֆի և կառավարական
պաշտօնէի դէմ կը բողոքուի և քննիչ կուզուի, վա-
լին գարձեալ չայոց գործերն ու ապահովութիւնը
միւթէսարըֆին կը յանձնէ: Այլ ևս դիւրին է հե-
տեցնել թէ վալիի կողմէ ի նպաստ միւթէսարըֆի
եկած հեռագրեր որ աստիճանն կը շփացնեն միւթաս-

բըմը և որբան կը վատթարացնեն հայոց վիճակը։ Աւ-
լիի երկրորդ հեռագրին ի պատասխան տրուած երրորդ
հեռագրին մէջ յայտնապէս յիշատակուած են հա-
մառօտիւ կառավարական զեղծումներն և աւելցուած,
թէ ցորչափ միւթասարըֆ և միւտտայիւումնումի մոււավին
պաշտօնի վրայ կը մնան՝ երբէք վատահումիւն չունիք
եկեղեցի և խանութ բանալու։ Ահա իրաց արդի վի-
ճակը. տեսնենք ինչ վերջաւորութիւն պիտի ունենայ։
Թուրք ժողովուրդը քիչ զինուած կարծես, այս օքեր
նորանոր պատրաստութիւններ ալ կը տեսնէ. նպատակ-
նին յայտնի է։ Միւթասարըֆը տեղըոյ և թամզա-
րայի հայոց սրտերը շահելու համար թամզարացի վի-
րաւոր բանտարկեալներն երեկ ազատ արձակեց։ Հինգ
օր առաջ ալ 6 սպանեալներու առթիւ տարիէն աւե-
լի բանտարկուած հետեւեալ 7 անմեղ հայերն դատա-
կան վճիռով անպարտ արձակուեցան. ասոնք են գասպար
Մազմանեան, Գառնիկ Մազմանեան, Արմանցի Կարա-
պետ, Շիպերցի Մկրտիչ Քէշիշեան, Մարկոս Սանտրգ-
եան, Միսաք Պ. Վարդանեան, Սահակ Գըրգիսէլեան
որ վեց զոհերէն Սեղրակ Գըրգիսէլեանի եղբարին է.
թէև շատ աշխատեցան այս եօթը հայերը դատապար-
տել իբր վեց փախստական սպանեալներու զէնք տուող,
սակայն չը յաջողեցան. որովհետև երբէք հատապող
ապացոյցներ չունեին և բնական է որ չը պիտի ունենա-
յին վասնդի անմեղ էին։

95 *описание* 6.

ԲԱՂԵՉԻ ԵՒ ՏԱՐՈՂԱՅ ԳԵՎԳԵՐԸ.

Մալ, 18 Հոկտեմբեր 1895

Անցած փոստային թիւրքաց գրգռումը և հայերը կոտորելու պատրաստութիւնը գրած էի. տեղւոյս իւլէմաններէն իր հայտեցութեամբ ծանօթ Հաճի Թայիպ էֆ. քանի ար օր առաջ գեղեր և քրտերու մեջ գնացած, զանոնք հրահանդած և ի բաղէշ անցած էր, ուր Բաղէշու շեյխերու և վտանգաւոր խապիլէից պետերու հետ համաձայնութեամբ՝ Բաղէշոյ հայերը կոտորելու ծրագիրը պատրաստած ամսոյս 13-ին կը մեկնի գէպի Մուշ, նոյնպէս հանդիպելով քանի մը քըրտաքնակ գիւղեր պէտք եղած հրահանդաբները տալով

13-ի ուրբաթ օր՝ Բաղեշի համար զարհուրելի օր
մը եղաւ. կէս օրին, ամբողջ թուրքեր զինեալ ձամփ-
ները կը գումարուին. թէկ հայերը նախապէս իմացած
էին թիւրքաց ծրագիրը և բողոքած էին տեղւու ո կուսա-
կալին, բայց նա յայտարարած էր որ բնաւ թող չը
վախնան և իրենց գործերը շարունակեն և իբր ցցց
թնդանօթ զետեղել տուած էր ինչ-ինչ գիրքերու վը-
րայ, ապահովացնելով հայերին թէ թուրքերը եթէ
յանդգնին յարձակում ընել՝ իսկոյն պիտի ռմբակոծէ:
Այսպէս հայերն ինքնինքնին յապահովի կարծելով ի-
րենց առօրեայ գործերով կը պահեն, երբ ժամը 7-ի ժա-
մանակները շուկայի քով գտնուած Ռւլի Ճամի մէջ
նախապէս պատրաստուած ծրագրի համաձայն, առաջին
անգամ քանի մը ատրճանակի հարուածներ կը լսուին
և վերջ թուրքաց գոռում գոչումով յարձակուեցան շու-
կայի վրայ, իբր թէ „կեավուրլար ձամփի պաստըլար”.
իսկոյն շուկայի երկու գլուխը կը բռնեն և անխնայ
կերպով կը ջարդեն շուկայի մէջ գտնուուներն և կը
թալնեն ու կը կողոպտեն ամբողջ հայ ևանութներն,
վերջ կը յարձակին հայ թաղերու վրայ և կը կողոպ-
տեն ու կսպաննեն, թէ ալր, թէ կին, թէ մանուկ

Զարդը կը շարունակէ մինչև ժամը 12, իսկ գիշերայն նորէն կողպուտ և մասնաւոր ջարդեր մինչև յաջորդ օրը և իբր թէ կառավալքութիւնը նոր հասկցած օգնութեան կը հասնի և կազատէ... թալնուած և բաց գուռ խանութմները: Մեռելց թիւը կը հաշուի 6-700, իսկ վերաւորեալք շատ են: Բաղեցու ամբողջ հարստութիւնն ոչնչացած կը համարուի: Բարիշի կոտորածի լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ըրջականներն և քրտերը, որք նախապէս բաղէշի վրայ յարձակած էին, իրենց առած աւարներով բեռնաւորեալ կը յարձակին մօտակայ հայ գիւղերու վրայ, կսպաննեն և կը կողպտեն, և այս կը տեէ մինչև ցայցմ:

Վասած լուրերնուև նայելով Վուլթիք, որ 500 տնէ կը բաղկանայ, ամբողջովին բնացինջ եղած է իսկ միւս գեղեցն, որք կիսաւեր մնացած են, ոմանք վառուած ու մանք կողոպտուած, ոմանք քանդուած և ժողովուրդը սրակոտոր եղած. ասոնց մանրամասնութիւննք յայտնի չեն գեռ. դէպքերը տարածուած են դէպի Ախլաթ, Պուլանք, Մանազիերտ, Խոյթ, Մոտկան, Վարդոյ և Սշոյ գայոտ:

• Բիւրտերն ամբողջ լեռներէն՝ իրենց որջերէն վայր
իշնալով սկսեր են ասպատակել, կոտորել, վառել ամ-
բողջ հայ գեղերն և ազատողները ցիրուցան եղած են,
ուր, չենք գիտեր. ազատելնուն յօյս չունիք, զի՞ ո՞ւ
կրնան ապաստանիլ:

Հոկտեմբեր 13-ին Բաղէջու կոտորածէն վերջ խակցյն հեռագիր եկաւ Մշոյ կառավարութեան և այդու թուրքեր, որք արգէն պատրաստ էին, իսկոյն վառեցան և բարկացան թէ ի՞նչ իրաւունքով Բաղէջի թուրքերըն իրենց վրայ նախայարձակի պատիւը վայելեն Հուզեղիւ հազ մի քանիք կրցան անոնց բարկութիւնը թեթևնել, առարկելով թէ կուսակալի փոխանորդը Բաղէջը էր և թէ պարտէր անկից սկսիլ և նշանն այն տալու էր և վերջը տաք սկսելու. ասով իսկոյն 5-600 հոգի կը վիանան և այն գիշերն իսկ Մշոյ թաղերու վրայ յարձակելու որոշում կուտան, այդ պահուն հայ մը. որ պատաշմամբ այդ գումարուած տեղէն կանցնէր զափիթիէի մը հետ, կը տեսնէ անոնց զինեալ բազմութիւնը և կահաբեկի: Թուրքերը կուղեն սպաննել զայն, բայց ի պատիւ զափիթիէին, նեղջ հայն ազատելով հազիւ ինքզինք կը ձգէ իր տունը. լուրը շուտ մը կը տարածուի հայոց մէջ, թող որ քանի մը խղճահար թուրքեր իրենց բարեկամ հայոց իմացուցած են տաճկաց գաղափարը: Ահա ասոնք կըսպասեն գիշերային յարձակման մը, բայց ի զուր. զի թուրքերը մտածած են որ գիշերով կարելի է ըստ յաջողին և տուներէն հրացանի գնդակ ընդունին և թէ ցերեկով շուկայի մէջ աւելի գործ կրնան տեսնել քան թաղերը, որ քիչ մը դժուարութիւններ ալ ունի:

Բայց հայերն այդ յոյսերն ալ ի գերև կը հա-
նեն և շաբաթ օր շուկան չեն գար ու տներնին քաշ-
ուած կսպասեն մահուան:

(ԱՐ ՀԱՐՈՒՆԱԿՎԵՒՑ)

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և գրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հացեով.—
M. Beniard—22, Ormiston Road, Shepherd's Bush.
London, W. [Angleterre].